Գնումների Հատուկ Ծանուցում

Երկիրը՝ **Հայաստանի Հանրապետություն**
Ծրագրի անվանումը՝ **"Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր" (ՈՀԲԾ)**
ՎԶՄԲ փոխառության No.՝ **8267AM**
Պայմանագրի անվանումը՝ **Տվյալների ստացման համակարգի հետ համատեղելի ջրաչափական սարքավորումների մատակարարում և տեղադրում**
Պայմանագիր No.՝ **ISEP/ICB/PG-13/001**

Մրցութային Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ՄԱՆՀ)

1.Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային Բանկից **«Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր» (ՈՀԲԾ)** ծախսերը հոգալու համար և մտադիր է այդ փոխառության միջոցների մի մասն օգտագործել **«Տվյալների ստացման համակարգի հետ համատեղելի ջրաչափական սարքավորումների մատակարարում և տեղադրում»** պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար: Այս պայմանագրերի վճարումները իրականացվելու են Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է ՀԲ-ի կանոններով և ընթացակարգերով:

2. **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն (ՋՏԾԻԳ ՊՀ)** հրավիրում է իրավասու մրցույթի մասնակիցներին փակ մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ ապրանքները մատակարարելու և տեղադրելու համար՝

Կետ 1.	***Ջրի մակարդակի մոնիթորինգի համահարգ՝ արևային պանելներից լիցքավորվող մարտկոցներով***	***- 6 հատ***
Կետ 2.	***Ջրի մակարդակի մոնիթորինգի համահարգ՝ փոփոխական հոսանքի ցանցից լիցքավորվող մարդկոցներով***	***- 61 հատ***
Կետ 3.	***Լիքը խողովակներում ջրի հոսքի չափման համահարգ՝ փոփոխական հոսանքի ցանցից լիցքավորվող մարդկոցներով***	***- 4 հատ***
Կետ 4.	***Լրացուցիչ մարդկոցներ 2-րդ կետի համար***	***- 3 հատ***

Պայմանագրի ընդհանուր տևողությունը **7 (յոթ) ամիս** է՝ Պայմանագիրը ստորագրելուց հետո: Այդ ժամկետը կներառի ապրանքների մատակարարում, նոր արկղների կառուցում և ապրանքների տեղադրում (գոյություն ունեցող արկղներում (18 հատ) ու Մատակարարի կողմից կառուցվելիք արկղներում (53 հատ)), ապրանքները տեղադրելուց հետո Պատվիրատուի, ջրօգտագործող ընկերությունների և ջրառների անձնակազմի ուսուցում շահագործման թեմաներով:

Տեղական նախապատվության **չի տրվելու**:

Որակավորման չափանիշներն են.

- Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նա ունի ֆինանսական միջոցներ, կամ նրա համար մատչելի են վարկային գծեր՝ առաջարկվող մրցութային գնի չափով:
- Համանման ապրանքների* արտադրության և/կամ մատակարարման առնվազն 5 (հինգ) տարվա փորձ (սկսած 2009թ հունվարի 1-ից):
- Համանման ապրանքների* մատակարարման, տեղադրման և չափաբերման առնվազն 3 (երեք) հաջող ավարտված պայմանագրեր 2009թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետը *(խնդրում ենք կցել պայմանագրերի պատճենները):*
  <u>Ծանոթություն.</u>
  (*) «Համանման ապրանքներ» նշանակում է՝ ստուգիչ-չափիչ սարքավորումներ և տվյալների ստացման-փոխանցման համակարգ:
- Պետք է ներկայացնել տեղեկանք(-ներ) շահառուից(-ներից) պայմանագրի(-ների) հաջող ավարտման մասին;
- Պետք է ներկայացվի գրավոր հաստատում առ այն, որ մրցույթի մասնակցին մատչելի կլինի Գնորդի երկրում մրցութային առաջարկում ներկայացված սարքավորումների հետ-մատակարարային սպասարկման համար:

- ՀՀ ռեզիդենտ մրցույթի մասնակիցները պարտավոր են ներկայացնել տեղեկանք (տրված հայտի ներկայացման վերջնաժամկետից 15 օրից ոչ ուշ) հարկային տեսչությունից՝ ՀՀ պետական բյուջեի և ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հանդեպ պարտավորություն չունենալու մասին:

Մանրամասն տեղեկությունները տրվում են Մրցութային փաստաթղթերում:

3. Մրցույթը անց է կացվելու **Միջազգային մրցութային սակարկությունների (ՄՄՍ)** ընթացակարգի համաձայն, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ ***"Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՁՎՄԲ-ի փոխառությունների և ՁՄԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառուների կողմից" (2011թ. հունվար)***: Մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերով սահմանված բոլոր իրավասու մասնակիցների համար: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ «ՋՏԾԻԳ» ՊՀ-ից և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ներքո նշյալ հասցեով՝ բոլոր աշխատանքային օրերին ժամը **10:00-ից մինչև 17:00 (երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ, բացի հանգստյան օրերից)**:

5. Շահագրգիռ մասնակիցները կարող են ձեռք բերել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը **անգլերեն լեզվով**, ներկայացնելով գրավոր դիմում ներքոհիշյալ հասցեով և վճարելով **50$ԱՄՆ** կամ **20,000 ՀՀ դրամ** չհատուցվող գումար: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին.

Շահառու. ՀՀ ֆինանսների նախարարություն/կենտրոնական գանձապետարան
Հաշվի համարներ. 900000906074 (ԱՄՆ դոլար) կամ 900000906082 (ՀՀ դրամ)

Մրցութային փաստաթղթերը կառաքվեն օդային փոստով (Երևանից դուրս առաքելու դեպքում) կամ առձեռն կհանձնվեն մրցույթի մասնակցի ներկայացուցչին: Երևանից դուրս առաքելու պարագայում տեղափոխման համար կգանձվի լրացուցիչ **100$ԱՄՆ** կամ **40,000 ՀՀ դրամ**: Բացի դրանից, մրցութային փաստաթղթերը կտրամադրվեն մրցույթի մասնակիցներին նաև էլեկտրոնային եղանակով:

6. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **2014թ. օգոստոսի 4-ին, ժամը 16:00-ին (Երևանի ժամանակով) կամ ավելի վաղ:** Էլեկտրոնային եղանակով մրցութային առաջարկների ներկայացում **չի թույլատրվում**: Ուշացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ **2014թ. օգոստոսի 4-ին, ժամը 16:00-ին (Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում**:

7. Մրցութային առաջարկները պետք է ուղեկցվեն Մրցութային առաջարկի երաշխիքով (բանկային երաշխիք), որի գումարն է. **16,000.0 ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք գումար ՀՀ դրամով կամ ցանկացած ազատ փոխարկելի արժույթով:**

8. Վերևում հիշատակվող հասցեն է.

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Պրն. Աղիբեկ Ղազարյան, տնօրեն
Պրն. Տիգրան Իշխանյան, ՋՕԸ-ների աջակցման խմբի կոորդինատոր
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
ՀՀ, ք.Երևան 0033, Բաղրամյան 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան); 226-596; 266-058 (գնումների բաժին)
Էլ. փոստ՝ aghazaryan@wsdp.am; tishkhanyan@wsdp.am; mcharyan@wsdp.am;